գոնէ Դուրեանի ամենայայտնի եւ իրապաշտ ուղղութեամբ գրուած թատերգութեան, այսինքն՝ «Թշուառներ»ի համառօտ բովանդակութիւնը, որպէսզի պարզ լինի մեզ համար իրապաշտ թատերագիր Դուրեանի դէմքը:

Մի ռուսահայ սնանկացած վաճառական՝ Ղուկասով ազգանունով, Ռուսաստանից չու�է Պոլիս եւ ապրում է թշուառ վիճակի մէջ: Նա ստիպուած է լինում ծպտեալ կերպով մուրացկանութիւն անել, պահելու համար իրեն եւ երկու զաւակներին, որոնցից մէկը՝ Վարդուհին՝ իր հարազատ աղջիկն է, իսկ միւսը՝ որդեգրուած Էդուարդը: Պոլսումն է գտնուում եւ նախկին հարուստ վաճառական Ղուկասովի, Երբեմնի Թօնժուանի, ապօրինի զաւակը՝ Գէորգը, որ զրամանենդ է, Նահապետով ազգանունով: Վերջինիս գործակիցն է խորամանկ Մակարը, որին Նահապետովը սապատող է կոչում:

Թովմա Ղուկասովն ապրում է հրեայ Սալոմոնի տանը: Տանտէրը պահանջում է Թովմայից, վճարել մի քանի ամսուայ վարձը, որ է 450 ղուրուշ, սակայն, Թովման դրամ չունի: Հրէան սպառնում է դուրս անել տնից Թովմային ոստիկանութեան միջոցով: Սնանկացած վաճառականը հարկադրուած ծախում է իր աղջկայ պատիւը Նահապետովին 50 ոսկիով, սակայն, այդ ոսկիները դուրս են գալիս կեղծ եւ չեն փրկում թշուառացած Թովմային: Աղջկան պատիւը վաճառելու նախօրեակին Թովման դուրս է անում տնից իր սիրած որդեգիր Էդուարդին, որ ճարահատած մտնում է թատրոնական խմբի մէջ իբր դերասան, ամսական 40 ֆրանքով:

Էդուարդը եւ Վարդուհին իրար առաջ սիրում էին իբրեւ քոյր եւ եղբայր, իսկ յետոյ իբրեւ նշանածներ: Վարդուհին իր պատիւը կորցնելուց յետոյ էլ ներողամիտ է դէպի իր անբախտ հայրը, սակայն, երբ իմանում է, թէ ոսկիները կեղծ են, զարհուրում է, յուսահատւում:

Այդ միջոցին Էդուարդը 5 ֆրանկ աշխատելով բերում է տուն եւ ուզում է տեսնել Վարդուհուն, սակայն, հայրը չի թողնում: Էդուարդ 5 ֆրանկը ձգում է Վարդուհու սենեակը եւ հեռանում: Վարդուհին էլ է գնում մտնում դերասանական խմբի մէջ, ուր ծառայում էր արդէն նրա սիրած Էդուարդը:

Հէնց առաջին հանդիպումին Վարդուհին խոստովանում է իր անպատուութիւնը, սակայն, Էդուարդը ներողամիտ է հանդիսանում, այնուամենայնիւ Վարդուհին ճնշուած տրամադրութեամբ որոշում է չապրել եւ թունաւորուում է: Էդուարդն էլ է թունաւորուում, չուզենալով ապրել իր սիրած աղջկայ մահից յետոյ: Այդպիսով երկուսն էլ ունենում են ողբերգական մահ:

Մինչ այդ Սալոմօն հրէայ տանտէրը դիմում է ոստիկանութեանը, որ ձերբակալեն Թովմային եւ պահանջեն նրանից տան վարձը: Այս դէպքից յետոյ է խեղճ Վարդուհին 5 ֆրանկը դրպանում մտնում դերասանական խմբի մէջ, ապա թունաւորուում իր սիրած երիտասարդի հետ միասին: Ձերբակալուած Թովման հարկադրուած է լինում ոստիկանութեանը յայտնելու մերկ ճշմարտութիւնը: Վերջինս շրջապատում է Նահապետովի բնակարանը:

Նախ քան ձերբակալութիւնը, Թովմայի եւ Նահապետովի խօսակցութիւնից պարզւում է, որ Նահապետով կոչուածը հէնց իր՝ Թովմա Ղուկասովի ապօրինի որդին է: Գէորգ Նահապետովի ձեռքի մատանին, որ իր վրայ կրում էր «Ղ» տառը (Ղուկասով), առիթ է տալիս Թովմային ճանաչելու իր ապօրինի որդուն, որ անպատուել էր ուրեմն իր քրոջը վերոյիշեալ հանգամանքներում...

Պարզւում է նմանապէս, որ Նահապետովը լաւ ոսկիներ էր տուել իր գործակից Մակարին յանձնելու Թովմային. սակայն, Մակարը փոխարինել էր կեղծ ոսկիներով: Այդպիսի գերդրուած վիճակում Նահապետովն ատրճանակի մի հարուածով վերջ է տալիս Մակարի կեանքին, որովհետեւ նա էր մեղաւոր, որ տեղի ունեցաւ այս ողբերգութիւնը...

Այժմ բոլորի համար կասկածից դուրս պիտի լինի, որ 1871 թուին այսպիսի իրական բովանդակութեամբ ողբերգութիւն գրողը, այն էլ հրաշալի թեթեւ եւ սահուն աշխարհաբարով, որ այն ժամանակ նոյնպէս նորութիւն էր, անշուշտ տաղանդաւոր թատերագիր լինելու նշաններն ունէր եւ անպայման կը լինէր, եթէ